

ԱՅԳԵՇԱՏԻ ԴԱՄՐԱՆԱԴԱՇՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

2. Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

1990 թ. Երևանի պետական համալսարանի հնագիտական արշավախումբը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ համատեղ պեղումներ կատարեց Այգեշատ գյուղի հյուսիս-արևմտյան տարածքները ընդգրկող դամբանադաշտում¹:

Դամբանադաշտը կազմված է մի քանի դամբանախմբերից, որոնք տարածվում են Քասախ գետի ձախ ափի երկայնքով՝ միմյանցից անջատվելով ինչպես բնական, այնպես էլ կիկլոպյան շարվածքով ընդգծված պատերով, աշտարակներով: Պեղման համար ընտրված դամբարանների տարածքը պատված է միմյանց կիպ, մեծ խտությամբ կազմված շուրջ 200 կրոմլեխաշարերից, որոնք աչքի են ընկնում մարդակերպ տարբեր չափի արձանների, սյունկուռքերի, ֆալլոսների առկայությամբ: Պեղվեցին և ուսումնասիրվեցին շուրջ երկու տասնյակ տարբեր մեծության, հիմնականում բրոնզի և վաղ երկաթի դարի ժամանակաշրջանին պատկանող, համալիրներ: Դամբանադաշտում ամեն մի կրոմլեխ ունի իր համարակալումը: Մեր կողմից ստորև ներկայացվում են միայն պեղված համալիրները:

Դամբարան № 1— Տեղադրված է դամբանախմբի արևելյան մասում: Արտաքուստ միաշար միջին չափի անմշակ բազալտե քարերով օղակված կրոմլեխ է: Տրամագիծը՝ 2,8 մ: Հողաթումբը չկա: Մինչև ծածկասալերը լրացված էր 0,3 մ հաստությամբ քարահողային լիցքով: Հատակագծում ուղղանկյուն արևելք-արևմուտք ուղղվածությամբ հիմնահողային կառուցվածքի դամբանախուցը (0,7 մ խորությամբ) ծածկված էր երեք ոչ մեծ կարմիր տուֆի սալերով: Հայտնաբերվեց երկու սափոր, մեկ կճուճ, մարդու ատամ, 12 սմ երկարությամբ բրոնզից ասեղ, սարդիոնից կտրվածքում կտր հինգ հուլունքներ: Դամբանախցի հատակը, ինչպես նաև ուղեկցող գույքը, պատված է կավով:

Դամբարան № 2— Գտնվում է № 1 կրոմլեխից 1,3 մ հեռավորությամբ դեպի արևմուտք: 3,5 մ տրամագծով, կոպիտ բազալտե քարերից շարված կրոմլեխ է: Լիցքի հզորությունը 0,2 մ, որի միջից հայտնաբերվեցին սև խեցու բեկորներ: Հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք կողմնորոշումով հիմնահողային դամբանախուցը ծածկված էր տուֆե երեք, ոչ մեծ չափի ծածկասալերով: Արևելյան կրոմլեխապատի մոտ, լիցքի միջից, հայտնաբերվեց գլխով դեպի արևելք ուղղված կարմիր տուֆից կնոջ արձան: Դամբանախցի հարավ-արևելյան հատվածում հայտնաբերվեցին հանգուցյալի կա-

¹ Տե՛ս 2. Գ. Ավետիսյան, Լ. Ն. Բիյագով, Այգեշատի դամբանադաշտի պեղումները, գեղուցումների թեզիսներ, Հայաստանում 1989—90 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Երևան, 1991, էջ 35—36:

վածեի ոսկորներին մի քանիսը՝ ազդրոսկրը, կողոսկրը: Կմախքի դիրքը հնարավոր չէր պարզել: Թաղումը զուրկ էր ուղեկցող գույքից:

Դամբարան № 4— Գտնվում է № 3-ից արևմուտք: Արտաքինից ներկայացնում է միաշար բազալտե խոշոր քարերից կրոմլեխ՝ 3,8 մ տրամագծով: 0,2 մ հզորությամբ քարահողային լիցքի միջից հայտնաբերվեցին սև խեցուբեկորներ: Հատակագծում ուղղանկյուն արևելք-արևմուտք կողմնորոշումով հիմնահողային դամբանախուցը ծածկված է մեկ կարմիր տուֆի ծածկասալով: Հանգուցյալը 45—55 տարեկան տղամարդ է²: Խիստ կծկված կմախքը, աչ կողքի վրա պառկած, ձախ ձեռքը կրծքին, գլխով դեպի արևելք, դեմքով վեր, կավածեի էր: Վերջինս գոտկատեղին կրում էր բրոնզե գոտի: Հայտնաբերվել է նաև երկու սև անոթներ:

Դամբարան № 5— Տեղադրված է № 4 դամբարանից անմիջապես հարավ: Արտաքուստ աննշան 0,15 մ հզորությամբ լիցքով, խոշոր բազալտե քարերից կազմված 3,7 մ տրամագծով կրոմլեխաշար է: Դամբանախուցը ծածկված է ձվածիր 2,5 քառ. մ մակերեսով կարմիր տուֆ ծածկասալով: Հատակագծում ուղղանկյուն արևելք-արևմուտք կողմնորոշումով հիմնահողային դամբանախցի թաղումը աչքի է ընկնում համեմատաբար հարուստ նյութով: Հանգուցյալը 35—55 տարեկան կին է: Կմախքը խիստ կծկված վիճակում է, ձախ կողքի պառկած, գլխով դեպի արևելք: Աչ ձեռքը դրված էր «որովայնին», ձախը՝ ուսին: Գանգը բացակայում էր: Աչ ձեռքի դաստակին հայտնաբերվեց բրոնզից ապարանջան: Վզի վրա կար սարդիոնե հուլունքներ: Կմախքը ամբողջովին կավով էր պատած: Դամբանախցի արևելյան զբլիսապատի մոտ հայտնաբերվեցին 5 սև խեցանոթներ: Հանգուցյալի ձախ ձեռքին կար փոքրիկ թաս:

Դամբարան № 6— Գտնվում է № 4 դամբարանից արևմուտք: Փոքր շափերի բազալտից 1,7 մ տրամագծով կրոմլեխաշար: Լիցքի հզորութունը կազմում է 0,25 մ: Դամբանախուցը ծածկված է կրոմլեխի շրջագիծն ընդգրկող սև տուֆ քարով: Հիմնահողային, արևելք-արևմուտք կողմնորոշումով, հատակագծում ուղղանկյուն դամբանախցից հայտնաբերվեցին սև փայլեցրած խեցաբեկորներ: Հատակը պատած էր 7 սմ կավաշերտով:

Դամբարան № 7— Տեղադրված է № 5 և № 6 կրոմլեխների միջև: Բազալտե ոչ մեծ շափի քարերից 3 մ տրամագծով կրոմլեխաշար: 0,2 մ հզորությամբ լիցքը քարահողային է: Խուցը ծածկված է բազալտե ծածկասալերից: Կրոմլեխաշարի արևելյան կողմում հայտնաբերվեց արձանի գլուխ, որն ունի կլոր իրան, ընդգծված քիթ, հարթ կտրված ճակատամաս: Դամբանախուցը հիմնահողային է, հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք կողմնորոշումով: Ոսկորների վատ պահպանվածության պատճառով հանգուցյալի սեռն ու տարիքը վերջնականապես չհաստատագրվեց: Հավանաբար թաղվածը տղամարդ է, որի միայն ոտքի ոսկորների մի մասը հաստատագրվեց: Դամբարանից գտնվեց կենտրոնական ողով երկաթե դանակի բեկոր, ինչպես նաև նիզակի պոչուկի մաս:

Դամբարան № 8— Գտնվում է № 7 և № 6 դամբարաններից արևմուտք: Կոպիտ մեծ բազալտե քարերից 5,2—4,1 մ շափերի տրամագծով կրոմլեխ: Լիցքը քարահողային է՝ կազմված 0,35 մ հզորությամբ շերտից: Դամբարանախուցը ծածկող սալերը երկու սև տուֆե կիսակոպտատաշ քարեր են: Խուցը հատակագծում ուղղանկյուն է, հիմնահողային, արևելք-արևմուտք կողմնորոշումով: Խցի հատակը պատված էր կավով: Կենտրոնում տեղադրված էր

² Մարդաբանական Նյութի բնորոշումը կատարվել է Ռ. Ա. Մկրտչյանի կողմից, որին հայտնում ենք շնորհակալություն:

երկու սև փայլեցրած անոթներ: Խցի արևելյան հատվածում թաղվածը 20—25 տարեկան կին էր: Կմախքը խիստ կծկված էր, ձախ կողքի վրա պառկած, գլխով ուղղված արևմուտք, դեմքով հարավ: Վերին վերջույթները ծավված են, ձեռքերը ուղղված դեպի դեմքը: Հայտնաբերվեց մեծ քանակությամբ ուղեկցող նյութ: Թաղվածի ձեռքին կային 6 բրոնզե ապարանջաններ (մեկին՝ 4, մյուսին՝ 2): Վզի վրա բացվեցին շորս բրոնզե բարակ և հաստ լարներից կտրացող ծայրամասերով վզնոցներ: Մեծ քանակի խխունջից, սարդիոնից և շաղախից տարբեր տիպի և ձևերի հուլունքները զարդարում էին կրծքի մասը: Գլխի վրա կար բրոնզե շիբղ: Ձախ քիմքի մոտ դրված էին երկու երկաթե դանակներ և մեկ թի:

Դամբարան № 9— Տեղադրված է № 8-ից անմիջապես արևմուտք: Կոպիտ, փոքր շափի բազալտե քարերից 3,3 մ տրամագծով կրոմլեխաշար: Լիցքը քարահողային էր, աննշան հզորությամբ՝ 0,15 մ, իսկ խուցը ծածկված տուֆ ծածկասալով: Խուցը հատակագծում ուղղանկյուն էր՝ արևելք-արևմուտք ուղղվածությամբ: Խցի կենտրոնական մասում հայտնաբերվեց սև փայլեցրած մեծ քրեղան: Վերջինս, ինչպես նաև ամբողջ խուցը, լցված էր կավե շերտով: Խցի հատակը եզրապատված էր մանր քարերով: Հանգուցյալի կրմախքի ոսկորների դիրքը անկանոն էր: Հավանաբար թաղվածը տղամարդ է:

Դամբարան №10— Գտնվում է № 8, 9-ից արևմուտք: Կոպիտ բազալտե քարերից 3 մ տրամագծով կրոմլեխաշար: Լիցքը քարահողային է, որի միջից հայտնաբերվեց սև փայլեցրած ակոսի նախշազարդով խեցու բեկոր: Դամբարանի խուցը, որ ծածկված էր երկու տուֆ սալերով, հիմնահողային է, արեւելք-արևմուտք ուղղվածությամբ: Հայտնաբերվեց մեկ փոքրիկ անոթ և խեցաբեկորներ: Կմախքը չի հայտնաբերվել: Դամբարանիցի հատակը կավածեփի է:

Դամբարան № 11— Գտնվում է № 10-ից արևմուտք: Մեծ բազալտե կոպիտ քարերից կրոմլեխաշար, 3,4—2,5 մ տրամագծով: Լիցքը քարահողային է, որի միջից հայտնաբերվեցին սև խեցաբեկորներ: Դամբարանի ծածկասալերը տուֆից են: Խուցը հիմնահողային է, արևելք-արևմուտք կողմնորոշումով: Խցի միջից հայտնաբերվեցին կոպտատաշ երկու բազալտ քարեր: Ուղեկցող նյութը չկար: Դամբարանը կենտոտաֆ է:

Դամբարան № 12— Գտնվում է № 11-ից արևմուտք: Փոքր շափի գետաքարերից, 1,7 մ տրամագծով կրոմլեխաշար: Լիցքը քարահողային է, որի միջից հայտնաբերվեցին մեծ քանակությամբ տարբեր՝ սև, փայլատ մակերեսով եղեգնանախշով, գծիկներով զարդարված, խեցաբեկորներ: Դամբարանը ծածկասալ չունի: Դամբարանի խուցը հիմնահողային է, արևելք-արևմուտք ուղղվածությամբ: Խցի հատակը պատած էր կավով: Պեղումների ժամանակ ոչ մի նյութ չհայտնաբերվեց: Այն կենտոտաֆ է:

Դամբարան № 13— Գտնվում է № 12-ից հարավ-արևմուտք: 3,5 մ տրամագծով կոպիտ բազալտե քարաբեկորներից կրոմլեխաշար: Լիցքը կազմված է մանր քարաբեկորներից, որը հեռացնելուց հետո բացվեց կարմիր տուֆից ծածկասալը: Լիցքի միջից հայտնաբերվեցին սև փայլեցրած խեցեղենի բեկորներ: Ծածկասալի վրա բացվեցին կարմիր տուֆից երկու կոտրված սյունիկուտքեր: Դամբարանի խուցը արևելք-արևմուտք կողմնորոշումով հիմնահող է: Խցի հատակին, արևելյան գլխապատի տակ, տեղադրված էին երեք սև անոթներ: Վերջիններիցս արևմուտք բացվեց ձեռքի ոսկորների մնացորդ, որի վրա կար բրոնզե ապարանջան: Կմախքից պահպանվել էին միայն ձեռքի ոսկորներ: Բացի բրոնզե ապարանջանից, գտնվեցին նաև երկաթե գամ, ապարանջան, սարդիոնե հուլունքներ: Դամբարանիցի հատակը կավածեփի էր:

Դամբարան № 14— Գտնվում է № 13-ից արևմուտք: Կոպիտ ոչ մեծ բազալտե քարերից 2,8 մ տրամագծով կրոմլեխ: Լիցքը նման է № 13-ին, շար-

ված մանր քարերով, 0,3 մ հզորությամբ: Հայտնաբերվեցին բազալտե աղորիքի կտոր, սև խեցանոթների բեկորներ, կրոմլեխաշարի արևմտյան պատի մոտ գտնվեց դեմքի վրա ընկած, գլխով դեպի արևելք ուղղված կնոջ տուֆե արձանիկ: Այն ունի ընդգծված դիմային մանրամասներ: Հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք ուղղվածությամբ հիմնահողային դամբանախուցը ծածկված է տուֆե մեծ սալաքարերով: Գրանցվել է, հավանաբար, 30—45 տարեկան կնոջ թաղում: Կմախքից պահպանվել էին միայն վերջույթների մի քանի ոսկորներ: Խցի հյուսիս-արևելյան անկյունում գտնվեց սև սափոր և կափարիչով փոքրիկ անոթ: Աճյունը և գույքը, ինչպես նաև ամբողջ դամբանախցի հատակը, պատած էր կավաշաղախով:

Դամբարան № 15— Գտնվում է № 14-ից հյուսիս-արևմուտք: Կոպիտ բազալտե քարերից 2,3 մ տրամագծով կրոմլեխ: Լիցքը քարահողային է, 0,3 մ հզորությամբ: Խցի ծածկասալերը չկան: Դամբանախուցը ձվածիր է, համապատասխան կրոմլեխների տրամագծին: Կմախք և ուղեկցող նյութ չըկար, թաղում չի կատարվել (կենոտաֆ):

Դամբարան № 16— Գտնվում է № 13 և № 14 դամբարանների միջև: Խոշոր բազալտե կոպիտ քարերից 5 մ տրամագծով կրոմլեխաշար: Արևելք-արևմուտք կողմնորոշումով հիմնահողային դամբանախուցը ծածկված է տուֆե երեք խոշոր սալաքարով: Հանգույցայր աջ կողքի վրա պռակած, խիստ կծկված վիճակում, գլխով արևելք, դեմքով հյուսիս ուղղված 45—65 տարեկան տղամարդ է: Դամբարանախցի արևելյան գլխապատի մոտ, կավածեփ հարթակի վրա, գտնվեցին բրոնզե փոքր նիզակ, երկու սև անոթներ: Մեկ այլ սև կճուճ հաստատագրվեց դամբանախցի հարավային պատին կից: Աճյունը, ուղեկցող գույքը, ամբողջ հատակը պատած է կավաշաղախով:

Դամբարան № 17— Գտնվում է № 16-ից արևմուտք: Մեծ և փոքր բազալտե քարերից երկշար 4,3 և 1,8 մ տրամագծերով կրոմլեխ: Լիցքը քարահողային է՝ 0,3 մ հզորությամբ, որի միջից հայտնաբերվեցին մի քանի սև խեցեբեկորներ: Արևելք-արևմուտք կողմնորոշումով հիմնահողային դամբանախուցը ծածկված է տուֆե մեծ սալաքարերով: Դամբարանում թաղում չի կատարվել (կենոտաֆ): Դամբարանի խցի հատակը պատած է կավաշաղախով:

Դամբարան № 18— Տեղադրված է դամբարանախմբի արևմտյան ծայրամասում: Բազալտե անմշակ քարերից միաշար (հյուսիսային մասում կրոմլեխի քարերը բացակայում էին) կրոմլեխ, 4,2—3,5 մ տրամագծով: Լիցքը քարահողային է՝ 0,25 մ հզորությամբ: Դամբանախուցը հիմնահողային է, արևելք-արևմուտք կողմնորոշումով, որը ծածկված էր երկու խոշոր տուֆե սալաքարով: Հայտնաբերվել է կոտրտված երկու խեցանոթ: Դամբանախցի հատակը պատված էր կավաշաղախով:

Դամբարան № 19— Տեղադրված է № 18-ից հարավ: 4,7 մ տրամագծով միաշար կիսակոպտատաշ տուֆ քարից կրոմլեխ է: Արևելյան կողմում շարված են 5 բազալտե քարեր, որոնք հենապատի նշանակություն են ունեցել: Լիցքը քարահողային է՝ 0,3 մ հզորությամբ, որի միջից հայտնաբերվեցին սև խեցեբեկորներ: Արևելք-արևմուտք կողմնորոշումով հիմնահողային դամբանախուցը ծածկված է երկու տուֆե մեծ սալաքարով: Դամբանախցից հայտնաբերվել է երկու խեցանոթ: Խցի հատակը պատած էր կավաշաղախով:

Դամբարան № 20— Գտնվում է № 19-ից հարավ-արևմուտք: 2,5 տրամագծով բազալտե քարերից կրոմլեխ է: Լիցքը քարահողային է՝ 0,3 մ հզորությամբ: Հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք ուղղվածությամբ հիմնահողային դամբանախուցը ծածկված է տուֆե ծածկասալով: Խցից հայտնաբերվել է երկու անոթ, մեկ բրոնզե ապարանջան, սարդիոնե հուլունքներ:

Կմախքի ոսկորները վատ էին պահպանված: Դամբանախցի հատակը կավածեփ էր:

Դամբարան № 21— Գտնվում է № 20-ից արևմուտք: 3,3—2,8 մ տրամագծով բազալտե մեծ և փոքր քարերից կրոմլեխ է: Լիցքը քարահողային է՝ 0,2 մ հզորությամբ, որի միջից հայտնաբերվեցին սև խեցեբեկորներ: Հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք ուղղվածությամբ հիմնահողային դամբանախուցը ծածկված է երկու տուֆե սալաքարով: Խցի հյուսիսային կողմում հայտնաբերվեց իրար վրա դրված երկու կավանոթ: Արևմտյան պատին կից դրված էր մեկկանթանի թաս: Կմախքը բացակայում էր: Հատակը կավածեփ էր:

Դամբարան № 22— Գտնվում է № 19-ից անմիջապես հարավ-արևելք: 4,1 մ տրամագծով խոշոր կիսակոպտատաշ տուֆ քարերից կրոմլեխ է: Լիցքը քարահողային է: Հիմնահողային, արևելք-արևմուտք ուղղվածությամբ, հատակագծում ուղղանկյուն դամբանախուցը ծածկված էր տուֆ սալաքարերով: Դամբարանում թաղում չի կատարվել (կենոտաֆ): Խցի հատակը կավով էր պատած:

Դամբարան № 23— Գտնվում է № 21-ից արևելք: 2,8—2,25 մ տրամագծով բազալտե միջին չափի քարերից կրոմլեխ է: Լիցքը քարահողային է՝ 0,35 մ հզորությամբ: Գտնվել են արևելք-արևմուտք ուղղվածությամբ տուֆե արձան (գլխով՝ արևելք, դեմքով՝ վեր), ինչպես նաև՝ հյուսիս-հարավ, արևմուտք-արևելք ուղղվածությամբ երկու տուֆե սյուն-կուռքեր: Հատակագծում ուղղանկյուն, հյուսիս-հարավ կողմնորոշումով դամբանախուցը հիմնահողային է: Վերջինս ծածկված էր ոչ մեծ երկու ծածկասալերով: Գրանցվել է 20—25 տարեկան կնոջ թաղում: Կմախքը խիստ կծկված էր, ձախ կողքի պառկած, գլխով՝ հյուսիս: Աջ դաստակին հայտնաբերվեց ապարանջան: Դամբանախցի հարավային պատի տակ հայտնաբերվեց 2 անոթ (մեկը՝ կարմիր ներկված): Դամբանախուցը կավով էր պատած:

Դամբարան № 24— Տեղադրված է № 19, 23, 25-ի միջև: 2,2 մ տրամագծով բազալտե միջին չափի, վատ պահպանված քարից կրոմլեխ է: Լիցքը քարահողային է՝ 0,2 մ հզորությամբ: Հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք ուղղվածությամբ հիմնահողային դամբանախուցը ծածկված է երեք տուֆե սալաքարերով: Կմախքը չկար: Դամբանախցի հյուսիսային և արևելյան մասերում գտնվեց երկու սև անոթ: Խցի հատակը կավածեփ էր:

Դամբարան № 25— Գտնվում է № 24 և 26-ի միջև: 3 մ տրամագծով բազալտե քարերով կրոմլեխ է: Լիցքի հզորությունը կազմում է 0,25 մ: Քարահողային է: Գտնվել են սև գույնի խեցեբեկորներ: Հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք կողմնորոշումով հիմնահողային դամբանախուցը ծածկված էր երկու սալաքարով: Գրանցվել է ձախ կողքի վրա խիստ կծկված, հավանաբար կնոջ թաղում: Հայտնաբերվել են երեք խեցանոթներ, բրոնզե ապարանջան, սարդիոնե հուլունքներ: Դամբանախցի հատակը պատած էր կավով:

Դամբարան № 26— Գտնվում է № 25 և № 27-ի միջև: 2,6 մ տրամագծով բազալտե քարերով կրոմլեխ է: Լիցքը քարահողային է՝ 0,25 մ հզորությամբ: Դամբանախուցը հատակագծում ուղղանկյուն է, հիմնահողային, արևելք-արևմուտք (շեղումով) կողմնորոշումով, ծածկված տուֆե և բազալտե ծածկասալով: Գրանցվել է 17—22 տարեկան, ձախ կողքի վրա պառկած կրնոջ թաղում: Կմախքի ոսկորները խիստ քայքայված էին: Հայտնաբերվել են երկու խեցանոթ, երկու վզնոց, սնկաձև ականջօղեր, սարդիոնե և մածուկից ուլունքներ: Խցի հատակը կավաշաղախով էր պատված:

Դամբարան № 33— Գտնվում է № 32-ից հարավ: 3,5 մ տրամագծով

բազալտե խոշոր կրամլեխ է: Լիցքը քարահողային է՝ 0,25 մ հզորությամբ, որի միջից հայտնաբերվեցին սև խեցեբեկորներ: Հատակագծում արևելք-արևմուտք կողմնորոշումով, հիմնահողային դամբանախուցը ծածկված էր երեք սալաքարով: Մածկասալերի հեռացումից հետո դամբանախցի արևելյան կողմում բացվեց խեցանոթ, որի մեջ կար երեք բրոնզե ապարանջան: Հայտնաբերվեցին սարդիոնե հուլունքներ: Գրանցված թաղումը վատ էր պահպանված:

Ներկայացվող բոլոր դամբարանները պատկանում են միևնույն տիպին: Դրանք արտաքինից միաշար (բացառությամբ № 17-ի) կրամլեխներ են, հատակագծում ուղղանկյուն, արևելք-արևմուտք ուղղվածությամբ (№ 23 ունի հյուսիս-հարավ կողմնորոշում), հիմնահողային դամբանախցերով, մեկից մինչև երեք սալաքարերով ծածկված շինություններ են: Այս տիպի մեջ առանձնանում են մի խումբ դամբարաններ (№ № 11, 12, 15, 22), որոնցում թաղում չի կատարվել (կենտաֆ):

Պեղումներից հայտնաբերված հնագիտական գտածոները բաժանվում են մի քանի խմբերի՝ զենքեր, զարդեր, խեցեղեն և քարե քանդակ-կուռքեր:

ԱՆՃՆԻՔ— Համեմատաբար սակավ քանակի այս գտածոները ներկայացված են բրոնզե փոքր նիզակով (№ 16), երկաթե դաշույնով, նիզակով (№ 7) ինչպես նաև երկու ոչ մեծ երկաթե դանակներով (№ 8): Բավականին հետաքրքիր է № 4 դամբարանից հայտնաբերված բրոնզե գոտին, որ ունի 8 սմ լայնք, 0,72 մ երկարություն, կլորացող ծայրեր: Գոտին եզրամասում հարդարված է թեք գծերի նախազարդումով: Կենտրոնական հատվածում նըշմարիլի է մեկմեկու հատվող գծազարդ: Գոտու ծայրերին և եզրերին ամրակապերի համար անցքեր են արված:

Զարդեք— Ներկայացված են մի քանի տիպի գտածոներով: Այս խմբի մեջ ընդգրկված զարդերից առանձնանում են հարթ և ատամնավոր մակերեսով, կտրվածքում կլոր, ձվածիր բրոնզե տարբեր չափի, ինչպես նաև օձադուխ ապարանջանները (№ № 13, 8, 23 և այլն): Հայտնաբերված զարդերից են կտրվածքում կլոր, ծայրերում դեպի դուրս կլորացող բրոնզե վզնոցները, որոնցից երկուսի վրա արված են գծանախշեր (№ 8, 26): № 8 դամբարանից հայտնաբերվել է բրոնզե շիթղ: 1-ին դամբարանից հայտնաբերվել է 0,1 մ երկարությամբ բրոնզե ասեղ: Հետաքրքիր է նաև բրոնզե վզնոց շղթայի առանձին մասերի հայտնաբերումը № 8 դամբարանից: Բացի նշվածից, գտնվել են բրոնզե լարից ականջօղեր: Առատ են սարդիոնից, մածուկից, ապակուց, հեմատիտից պատրաստված ուլունքները: Դրանք բաժանվում են մի քանի տիպի՝ կլոր՝ տակառաձև, երկկոնիկ: Մածուկե և ապակյա հուլունքները կապույտ, սպիտակ, դեղին գույն ունեն: Դամբարաններից հայտնաբերվեցին տարբեր չափի մոտ 100-ի հասնող խխունջից, երբեմն մշակված, զարդաշարան:

Խեցեղեն— Առավել մեծ քանակի այս գտածոները ներկայացված են մի քանի տիպով: Դրանք հիմնականում սև փայլեցրած, փայլատ մակերեսով խեցանոթներ են: Ըստ իրենց տիպաբանության, քննարկվող անոթները բաժանվում են հետևյալ խմբերի՝ կճուճներ, սափորներ, քրեղան-թասեր: Կճուճները ունեն կլորացող իրան, դուրս ճկված շուրթ, հարթ, երբեմն լայն հատակ: Զարդամոտիվների մեջ առանձնանում են ալիք-գիգզագ, հասկանախշի, եղեգնանախշի հորինվածքները: Սափորները ունեն կլոր, երկկոնիկ, դեպի վեր լայնացող իրան, կարճ վիզ, դուրս ճկված շուրթ, հարթ, փոքր հատակ: Այս խմբին պատկանող անոթները զարդարված են եռանկյունիներով, շերտններով, մատնեքանախշով: Հանդիպում են փայլանախշով արված սափորներ: Շերտնները և եռանկյունիները երբեմն լրացվում են բեկյալներով, կետազար-

դով: Թաս-քրեղանները ունեն դեպի վեր լայնացող իրան, եզրագծված կողեր, կլորացող հարթ շուրթեր, նեղ հատակներ: Ներկայացվող կավանոթները շուրթի տակ ունեն զուգահեռ ներձկված գոտեզարդ: № 19 դամբարանից հայտնաբերված թասը ունի կտրվածքում կլոր կանթ:

Քարե ֆանդակ-կուլտեր— Այս գտածոները բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի մեջ առանձնանում են № № 2, 14, 23 դամբարաններից հայտնաբերված կանացի արձանները, ինչպես նաև № 7-ի գլուխը: Արձանները տարբեր շափերի են՝ 0,3—0,7 մ բարձրությամբ: Կարմիր տուֆից ընդգծված դիմալին մանրամասներով այս արտեֆակտների մեջ առանձնանում է № 2 կրոմլեխից հայտնաբերվածը, որի կրծքին քանդակված է մանյակ: Հաջորդ խումբը ներկայացված է կարմիր տուֆի սյուն-կուռքերով (№ № 13, 23), որոնցից մեկը կտրվածքում սեղանաձև է: Պեղված դամբարանների ներքին թվագրման ժամանակագրական սահմանները ճշտելու համար կարևոր նշանակություն ունեն մի քանի դամբարաններից հայտնաբերված նյութի վերլուծությունը: Հարկ է նշել, որ № 23 կրոմլեխից հայտնաբերված երկու խեցանոթները թե իրենց տիպաբանությամբ և թե զարդամոտիվներով վերաբերում են ուշ բրոնզի վերջին փուլին: Հատկապես բնորոշ է սև փայլանախշով, քայլող դրոշմիչով ալիքազարդ, թրծումից հետո կարմիր ներկի հետքերով հարդարված երկկոնիկ անոթը, որով համալիրը թվագրվում է մ. թ. ա. 13—12-րդ դդ.: Այս դամբարանը պեղված կրոմլեխների մեջ առաջիմ ամենավաղն է՝ իր զուգահեռները գտնելով հատկապես Լոռի բերդում³, Լճաշենում⁴:

Մնացած դամբարաններից հայտնաբերված հնագիտական գտածոների վերլուծությունը, մանավանդ խեցեղենի ձևերը, ինչպես նաև զարդամոտիվների կատարումը և առանձին տարրերի քննությունը հնարավորություն է տալիս վերոհիշյալ համալիրները թվագրել մ. թ. ա. 10—9-րդ դդ.: Այս նյութերը իրենց որոշակի համեմատականները ունեն Շիրակի⁵, Թալինի⁶, մասնավորապես Կարմիր բերդի⁷ նյութերում, թվագրվելով վաղ երկաթի դարաշրջանով:

Г. Г. АВЕТИСЯН — Исследование Айгешатского могильника. — Исследования Айгешатского могильника дают возможность очертить ход исторического развития на материалах одного могильника. Было раскопано 25 погребальных грунтовых сооружений типа кромлех. Археологический материал имеет многочисленные аналогии со многими памятниками и датируется XIII—IX вв. до н. э.

³ Տե՛ս С. Г. Деведжян, Лори берд I, Ереван, 1981, էջ 46—47:

⁴ Տե՛ս А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 18:

⁵ Տե՛ս Т. С. Хачатрян, Артикский некрополь, Е., 1979, էջ 16:

⁶ Տե՛ս С. А. Есаян, Ереван (Археологический очерк), Е., 1969, էջ 29—40:

⁷ Տե՛ս П. С. Аветисян, Раскопки в Талинском районе.—В кн.: АО, М., 1988, էջ 467—488: